

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՄՄՀ ռեկտոր

\_\_\_\_\_ Դ. Ս. Գաբրիելյան  
«21» փետրվարի 2013 թ.

### ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

### ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

### ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Քննարկվել և ընդունվել է ՄՄՀ գիտխորհրդում

(արձանագր. թիվ 40 «21» փետրվարի 2013 թ.)

#### *Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ*

1.1 Մեսրոպ Մաշտոց Համալսարանի ուսանողական խորհուրդը (այսուհետ՝ ՈւԽ) ուսանողների ինքնակառավարման ներկայացուցչական ընտրովի բարձրագույն մարմին է:

1.2 ՈւԽ-ն ապաքաղաքական ու ապակուսակցական կազմակերպություն է:

1.3 ՈւԽ-ն արտահայտում և պաշտպանում է ուսանողության շահերը:

1.4 ՈւԽ-ն գործում է ԼՂՀ սահմանադրությամբ, ԼՂՀ գործող օրենսդրությամբ, ՄՄՀ համալսարանի և սույն կանոնադրությամբ:

1.5 ՈւԽ կանոնադրությունը հաստատվում է համալսարանի խորհրդի կողմից:

1.6 ՈւԽ-ի լրիվ անվանումն է՝ հայերեն Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Ուսանողական խորհուրդ, ռուսերեն՝ Студенческий совет Университета Месроп Маштоц, անգլերեն՝ Student Council of the Mesrop Mashtots University.

#### *Բ. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ*

2.1 Աջակցել ուսանողների սոցիալական խնդիրների լուծմանը, պաշտպանել նրանց շահերն ու իրավունքները:

2.2 Իրազեկել ուսանողներին իրենց իրավունքների ու պարտականությունների մասին:

2.3 Նպաստել ուսանողների ուսումնառության արդյունավետության բարձրացմանը, կենսագործունեության ակտիվացմանը, նրանց գիտակրթական, մտավոր, ստեղծագործական, բարոյական և հոգևոր զարգացմանը:

2.4 Անմիջականորեն մասնակցել ազգային հարստության պահպանման գործընթացներին:

2.5 Կազմակերպել ուսանողության ազատ ժամանցը, հանգիստը:

2.6 Ստեղծել կապեր ԼՂՀ, ՀՀ և արտերկրի բուհերի, ինչպես նաև գործող երիտասարդական կազմակերպությունների հետ:

### ***Գ. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ***

3.1 ՈւՄ-ն գործունեությունն իրականացնելիս առաջորդվում է իր նպատակներով ու խնդիրներով:

3.2 ՈւՄ-ն համագործակցում է ԼՂՀ-ում գործող համաբնույթ կազմակերպությունների, ինչպես նաև մասնավոր անձանց հետ:

### ***Դ. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ***

4.1 ՈւՄ-ի բարձրագույն ղեկավար մարմինը համալսարանի Ուսանողական Խորհրդի համագումարն է:

4.2 ՈւՄ-ի համագումարին մասնակցում են ֆակուլտետային ՈւՄ-ների ներկայացուցիչները՝ ըստ համալսարանի ֆակուլտետների ուսանողների թվի համամասնությամբ:

4.3 Համագումարը գումարվում է ուսումնական տարվա սկզբին: Համագումարն իրավասու է, եթե նրան մասնակցում է ընդհանուր կազմի երկու երրորդից ավելին:

4.4 ՈւՄ-ի նախագահության որոշմամբ, ինչպես նաև ֆակուլտետային ՈւՄ-ների անդամների ընդհանուր թվի առնվազն 1/3-ի պահանջով կարող է հրավիրվել ՈւՄ-ի արտահերթ համագումար:

4.5 Համագումարի որոշումներն ընդունվում են մասնակիցների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ:

4.6 ՈւՄ-ի նախագահությունը կազմված է ՈւՄ նախագահից, փոխնախագահից, քարտուղարից, ֆակուլտետային ՈւՄ նախագահներից և, ի պաշտոնե, հանձնաժողովների նախագահներից:

#### 4.7 Համագումարը՝

ա) քննարկում է ՈւԽ-ի կանոնադրությունը, դրանում կատարում լրացումներ ու փոփոխություններ և ներկայացնում համալսարանի խորհրդի հաստատմանը:

բ) Քննարկում է ընթացիկ և հեռանկարային հարցեր:

գ) Ընտրում է ՈւԽ-ի նախագահ, փոխնախագահ, քարտուղար:

դ) Լսում է նախագահության հաշվետվությունը համագումարի միջև ընկած ժամանակահատվածում ՈւԽ-ի կատարած աշխատանքների մասին:

#### 4.8 ՈւԽ-ի նախագահությունը՝

ա) համագումարների միջև ընկած ժամանակահատվածում իրականացնում է ՈւԽ-ի աշխատանքների ղեկավարումը:

բ) Համակարգում է ֆակուլտետային ՈւԽ-ների գործունեությունը:

գ) Նիստեր է գումարում 2 շաբաթը մեկ անգամ, որտեղ քննարկվում են ՈւԽ-ի ընթացիկ հարցերը, լսվում են զեկուցումներ ֆակուլտետներում և հանձնաժողովներում կատարվող աշխատանքների մասին:

դ) Առաջադրում է ներկայացուցիչներ ինստիտուտի ամսագրի խմբագրակազմում և ինստիտուտի արհմիութենական կազմակերպություններում:

ե) Անհրաժեշտության դեպքում հրավիրում է նախագահության արտահերթ նիստեր:

4.9 ՈւԽ-ի նախագահության լիազորությունների ժամկետը լրանում է նորընտիր ՈւԽ-ի համագումարի անդրանիկ նիստում: Ժամկետից շուտ այդ լիազորությունները դադարեցվում են ՈւԽ-ի անդամների ընդհանուր թվի 2/3-ի որոշմամբ:

4.10 Վերը նշված ոլորտներին չառնչվող կարևոր այլ հարցերով զբաղվելու համար ՈւԽ-ն կարող է ստեղծել ժամանակավոր հանձնաժողովներ:

4.11 ՈւԽ-ի լիազորությունների ժամկետը 1 տարի է:

#### 4.12 ՈւԽ-ի նախագահը՝

ա) վարում է համագումարը և նախագահության նիստերը, նիստերի ընթացքում կազմակերպում է նախագահության անդամների հաշվետվությունների ու առաջարկությունների լսում ու քննարկում:

բ) Խորհուրդը ներկայացնում է պետական մարմիններում և հասարակական կազմակերպություններում, համալսարանի ռեկտորատում և գիտխորհրդում:

գ) Համագումարում հանդես է գալիս նախագահության գործունեության մասին կիսամյակային հաշվետվություններով:

դ) Անհրաժեշտության դեպքում հրավիրում է ՈւԽ-ի համագումարի և նախագահության արտահերթ նիստեր:

զ) Առաջարկում է փոխնախագահի և քարտուղարի թեկնածություններ:

Ուսխորհրդի նախագահ 1 տարի ժամկետով կարող է ընտրվել ինստիտուտի առկա բաժնի ցանկացած ուսանող, որն աչքի է ընկնում բարձր առաջադիմությամբ և հասարակական ակտիվ գործունեությամբ՝ ընդհանուր ժողովի ողջ կազմի ձայների երկու երրորդ մասը բաց քվեարկությամբ ստանալու դեպքում:

#### 4.13 Փոխնախագահը՝

ա) զբաղվում է ֆակուլտետների ՈւԽ-ների և հանձնաժողովների աշխատանքների համակարգմամբ:

բ) Նախագահի բացակայության ժամանակ փոխարինում է նրան:

#### 4.14 Քարտուղարը՝

ա) ղեկավարում է քարտուղարության աշխատանքները:

4.15 ՈւԽ-ն ստեղծում է հանձնաժողովներ հետևյալ ոլորտների աշխատանքների կազմակերպման համար՝

ա) մշակույթի, սպորտի և ազատ ժամանցի,

բ) գիտաուսումնական,

գ) լրատվության և քարոզչության,

դ) ուսանողների իրավունքների պաշտպանության,

ե) արտաքին կապերի և հարաբերությունների:

4.16 Հանձնաժողովներն իրենք են որոշում իրենց նիստերի գումարման պարբերականությունը, դրանց ժամկետները և անհրաժեշտությունը

4.17 հանձնաժողովի նախագահը ՈւԽ-ի հաստատմանն է ներկայացնում՝

ա) իր հայեցակարգը տվյալ հանձնաժողովի գործունեության վերաբերյալ,

բ) հանձնաժողովի նախագահի տեղակալի և առնվազն երեք անդամների թեկնածություններ:

4.18 ՈւԽ-ն կարող է ստեղծել ակումբներ, որոնք հաշվետու են մշտական հանձնաժողովներին:

4.19 Ֆակուլտետի ինքնակառավարման բարձրագույն մարմինը ֆակուլտետի ուսանողական խորհուրդն է, որը ձևավորվում է ներկայացուցչական սկզբունքով: Նրա անդամներն ընտրվում են կուրսերի ժողովներում ուսանողների թվի համամասնությամբ:

#### 4.20 Ֆակուլտետի ՈւԽ-ն՝

ա/ պարբերաբար վերլուծում և ամփոփում է կուրսերի ընթացիկ առաջադիմությունները և հաճախումները:

բ/ Ուսանողներին շահագրգռում է ինքնուրույն աշխատանքի, նրանց ընդգրկում գիտահետազոտական աշխատանքներում, սպորտային և գեղարվեստական ինքնագործունեության խմբերում, զբաղվում է նրանց բարոյագեղագիտական և ազգային-քաղաքական դաստիարակությամբ:

գ/ Կազմակերպում է միջկուրսային ստուգատես-մրցույթներ, հանդիպումներ և այլն:

դ/ Ամիսը մեկ անգամ գումարում է նիստեր:

ե/ Նախագահության կամ խորհրդի անդամների ընդհանուր թվի 1/3-ի պահանջով կարող է հրավիրել ֆակուլտետի ՈւՄ-ի արտահերթ նիստ:

զ Կարող է ունենալ մշտական և ժամանակավոր հանձնաժողովներ:

#### 4.21 Ֆակուլտետի ՈւՄ-ի`

ա/ անդամների ձայների պարզ մեծամասնությամբ բաց քվեարկությամբ ընտրվում են ֆակուլտետի ՈւՄ-ի նախագահը, փոխնախագահը և քարտուղարը: Ֆակուլտետի ՈւՄ-ի և նրա ղեկավար մարմինների ընտրությունները կատարվում են տարեկան մեկ անգամ:

բ/ Նախագահը, փոխնախագահը և քարտուղարը համալսարանի ՈւՄ-ի անդամներ են ի պաշտոնե:

գ/. Նախագահը լիիրավ ձայնով մասնակցում է ֆակուլտետի խորհրդի նիստերին:

դ/ Նախագահությունը իր լիազորությունները ժամկետից շուտ դադարեցնում է ֆակուլտետի ՈւՄ-ի անդամների 2/3-ի որոշմամբ: Ֆակուլտետի ՈւՄ-ի նախագահի անբավարար աշխատանքի, պարտականությունների թերի կատարման կամ անգործության դեպքերում նախագահության կողմից վերջինիս կարող է հայտնվել անվստահություն, որից հետո երկշաբաթյա ժամկետում ֆակուլտետի ՈւՄ-ն ընտրում է նոր նախագահ:

4.22 Կուրսերում բաց քվեարկությամբ ընտրվում են ուսանողակ'ան խորհուրդներ առնվազն 5 հոգուց բաղկացած, որոնցից մեկը ընտրվում է կուրսի ՈւՄ-ի նախագահ:

4.23 Կուրսի ՈւՄ-ի անդամները իրենց լիազորությունները դադարեցնում են կուրսի անդամների ընդհանուր թվի 2/3-ի որոշմամբ:

4.24 Կուրսի ՈւՄ-ն ունի իր լիազոր ներկայացուցիչը ֆակուլտետի ՈւՄ-ի կազմում:

4.25 Կուրսի ՈւՄ-ի նախագահը հրավիրում և նախագահում է կուրսի ժողովները, ինչպես նաև հետևնում ժողովի ընդունած որոշումների կատարման ընթացքին:

4.26 Կուրսի ՈւՄ-ն կազմակերպում է կուրսի ուսման, հաճախումների ստուգման մրցույթներ, հետևում համակուրսեցիների կարգապահությանն ու առաջադիմությանը:

4.27 Կուրսի ՈւՄ-ն հարց է բարձրացնում ֆակուլտետի ՈւՄ-ի առջև` ուսանողներին խրախուսելու, իսկ կարգազանցներին կարգապահական տույժի ենթարկելու համար:

***Ե. ՈՒՄԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ***

***ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ***

5.1. ՈւՄ-ն տնօրինում է նյութական և գույքային միջոցներ, անվճար օգտվում է համալսարանի տարածքային և գույքային միջոցներից: Նրա ֆինանսական միջոցները գոյանում են համալսարանի հաշվից կատարվող մասհանումներից, նվիրատվություններից, հանգանակություններից, ԼՂՀ օրենսդրությանը չհակասող այլ աղբյուրներից:

5.2 ՈւՄ-ն ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է ձեռք բերել և տնօրինել նյութական միջոցներ:

***Զ. ՈՒՄԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ***

Համալսարանի ՈւՄ-ն լուծարվում է ԼՂՀ օրենքներին, համալսարանի կանոնադրությանը համապատասխան, ինչպես նաև ՈւՄ-ի անդամների ընդհանուր թվի 2/3-ի որոշմամբ: Լուծարումից հետո ՈւՄ-ի միջոցներն օգտագործվում են ՈւՄ-ի կանոնադրական խնդիրների իրականացման համար:

***Է. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ***

ՈւՄ կանոնադրության ընդունումից հետո բոլոր օղակներում, կանոնադրությանը համապատասխան, անցկացվում են ընտրություններ: